ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2014թ. N_____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 254 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» N 254 որոշման 1-ին կետով հաստատված՝ նյութական ու ոչ նյութական ակտիվների, ծառայությունների (աշխատանքների) ձեռք բերման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջների սահմանման և այդ փաստաթղթերի կազմման կարգում՝

1) «(զինվորական գրքույկի, սոցիալական քարտի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը» բառերը փոխարինել «(անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը կամ հանրային ծառայության համարանիշը» բառերով.

2) 2-րդ կետի «բ» ենթակետը «կնիքը (դրոշմակնիքը)» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ, եթե հաշվարկային փաստաթուղթը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության հարկ վճարողի կողմից և պարունակում է գեներացված սերիա ու համար» բառերով.

3) 4-րդ կետի «բ» ենթակետը «300 հազ. դրամը» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ, եթե հաշվարկային փաստաթուղթը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության հարկ վճարողի կողմից և պարունակում է գեներացված սերիա, համար» բառերով.

4) 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-ին կետ.

«6.1. Անկախ սույն կարգի 6-րդ կետի դրույթներից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս ստացված ծառայությունների (ընդունված աշխատանքների) գծով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները համարվում են էականորեն խախտված, եթե այդ փաստաթղթերում առկա չէ ստորև նշված վավերապայմաններից որևէ մեկը՝

1) ծառայություններ մատուցողը (աշխատանքներ կատարողը).

2) ծառայությունների (աշխատանքների) տեսակը.

3) ժամանակահատվածը, որի ընթացքում մատուցվել (կատարվել) են հաշվարկային փաստաթղթերում նշված ծառայությունները (աշխատանքները):

Սույն կետի «գ» ենթակետում նշված պայմանը հաշվարկային փաստաթղթում արտացոլված չլինելու դեպքում՝ այդ կետի պահանջը համարվում է բավարարված, եթե ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ժամանակահատվածն արտացոլվել է ծառայության մատուցման (աշխատանքների կատարման) գործարքի կողմերի միջև կնքված պայմանագրում (դրա հավելվածում) և (կամ) կատարողական ակտում և (կամ) հանձնման-ընդունման ակտում, և հաշվարկային փաստաթղթում կատարված է հղում այդ փաստաթղթին (փաստաթղթերին):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը: Սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջը տարածվում է որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի նկատմամբ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**